ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/149

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.06.2021թ. թիվ 26/26-1/9313-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի 03.06.2021թ. թիվ Մ/Պ-21/33 գրության հիման վրա, 09.06.2021թ. թիվ 26/26-1/9313-2021 գրությամբ նախաձեռնել է «Ազուռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ազուռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/149 ընթացակարգի շրջանակներում 16.06.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.06.2021թ. թիվ Մ/Պ-21/33 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի /այսուհետ Ընկերություն/ միջև «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱԶ» ծածկագրով 29.12.2020թ. կնքված (17.02.2021թ. կնքված Համաձայնագիր N1) «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը /այսուհետ մատակարարման պայմանագիր/ սույն թվականի հունիսի 01-ից համարվում է միակողմանի ամբողջությամբ լուծված՝ հիմք ընդունելով 26.05.2021թ. «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գրությունը առ այն, որ Ընկերությունը դադարեցնում է հետագա սննդամթերքի մատակարարումը, N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱԶ» ծածկագրով 29.12.2020թ. կնքված սննդամթերքի մատակարարման պայմանագրի 6.6 կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև պայմանագիրը միակողմ լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հանգամանքը:

Խնդրում ենք Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 45-րդ կետի համապատասխան նախաձեռնել տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/149 ընթացակարգի շրջանակներում 16.06.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱՋ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքը է մատակարարվի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

3. Կողմերի միջև 17.02.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱՋ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

4. «Ազուռ» ՍՊԸ-ն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ին ուղղված 26.05.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«2020թ. դեկտեմբերի 29-ին «Ազուռ» ՍՊԸ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ԳԵՏ-ԱՋ»

ծածկագրով պայմանագիր, որին կից 17.03.2021թ. կնքվել է համաձայնագիր «Ազուռ» ՍՊԸ-ի և «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի միջև համապատասխան ֆինանսական միջոցների առկայության համար: Պայմանագրի շրջանակներում «Ազուռ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 700կգ կաթնային շիլա /չափաբաժին 59/ 4497 դրամով, որը մինչև այս պահը պատշաճ մատակարարվել է, սակայն ՍՊԸ-ն բանակցության ժամանակ առաջարկել է սխալ միավորի գին կրելով մեծ ֆինանսական կորուստներ: Հաշվի առնելով ՀՀ-ում նոր կորոնավիրուսի համաճարակով (covid 19) սահմանված սահմանափակումներով պայմանավորված ֆինանսատնտեսական իրավիճակը և դրա հետևանքով տնտեսությանը հասցված վնասները նաև տվյալ ապրանքի թանկացումը ՍՊԸ-ն այլևս ի վիճակի չէ մատակարարել տվյալ պայմանագրից նշված չափաբաժինը: Հաշվի առնելով ՍՊԸ-ի կրած վնասները խնդրում ենք միակողմանի լուծել ամբողջ պայմանագիրը»:

5. Պատվիրատուն «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 27.05.2021թ. թիվ Մ/Պ-21/32 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ն /այսուհետ Ընկերություն/ միջև «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱԶ» ծածկագրով 29.12.2020թ. կնքված (17.12.2021թ. կնքված համաձայնագիր N1) «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը /այսուհետ մատակարարման պայմանագիր/ համարվում է ամբողջությամբ լուծված՝ հիմք ընդունելով 26.05.2021թ. «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գրությունն առ այն, որ ընկերությունը դադարեցնում է հետագա սննդամթերքի մատակարարման պայմանագրի 6.6 կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները գանձելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 01.06.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.06.2021թ. թիվ 26/26-1/9313-2021 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի 03.06.2021թ. թիվ Մ/Պ-21/33 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

(…)

3. Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱՋ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքը է մատակարարվի պայմանագիրն ուժի

մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

Կողմերի միջև 17.02.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱՋ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

«Ազուռ» ՍՊԸ-ն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ին ուղղված 26.05.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«2020թ. դեկտեմբերի 29-ին «Ազուռ» ՍՊԸ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ԳԵՏ-ԱՋ» ծածկագրով պայմանագիր, որին կից 17.03.2021թ. կնքվել է համաձայնագիր «Ազուռ» ՍՊԸ-ի և «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի միջև համապատասխան ֆինանսական միջոցների առկայության համար: Պայմանագրի շրջանակներում «Ազուռ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 700կգ կաթնային շիլա /չափաբաժին 59/ 4497 դրամով, որը մինչև այս պահը պատշաճ մատակարարվել է, սակայն ՍՊԸ-ն բանակցության ժամանակ առաջարկել է սխալ միավորի գին կրելով մեծ ֆինանսական կորուստներ: Հաշվի առնելով ՀՀ-ում նոր կորոնավիրուսի համաճարակով (covid 19) սահմանված սահմանափակումներով պայմանավորված ֆինանսատնտեսական իրավիճակը և դրա հետևանքով տնտեսությանը հասցված վնասները նաև տվյալ ապրանքի թանկացումը ***<u>ՍՊԸ-ն այլևս ի վիճակի չէ մատակարարել տվյալ պայմանագրից նշված չափաբաժինը: Հաշվի առնելով ՍՊԸ-ի կրած վնասները խնդրում ենք միակողմանի լուծել ամբողջ պայմանագիրը»:</u>***

Պատվիրատուն «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 27.05.2021թ. թիվ Մ/Պ-21/32 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ն /այսուհետ Ընկերություն/ միջև «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱՋ» ծածկագրով 29.12.2020թ. կնքված (17.12.2021թ. կնքված համաձայնագիր N1) «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը /այսուհետ մատակարարման պայմանագիր/ համարվում է ամբողջությամբ լուծված՝ ***<u>հիմք ընդունելով 26.05.2021թ.</u>***

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գրությունն առ այն, որ ընկերությունը դադարեցնում է հետագա սննդամթերքի մատակարարման պայմանագրի 6.6 կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները գանձելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 01.06.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Ազուռ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի միջև 29.12.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ 26.05.2021թ. գրությամբ հայտնել է, որ ***այլևս ի վիճակի չէ մատակարարել տվյալ պայմանագրի 59-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը և խնդրել միակողմանի լուծել ամբողջ պայմանագիրը***, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված

խախտում, ուստի առկա են «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.06.2021թ. թիվ 26/26-1/9313-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ազուռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**